ծնողացն մահտեսի Մելգոնին, Հոխիսիմին և եղբարցն մահտեսի Սարգսին և տիրացու Յարութիւնին և ամենայն զարմից նորին թվ. ՌՄԿԴ» (1814). տեսնել (Ararat, 1898, էջ 91):

ՍՏԵՓԱՆ ՎՐԴ.— Մբ. Նւ. Իզմիրի 1775ին:

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ.— Մբ. Նւ. Հապէշիստանի, ընկերակցութեամբ Մխալիճցի Յակոբ վրդ.ի, 1825ին երկուքն ալ կը կողոպտուին Հապէշիստանի մէջ. Ստեփանոս հիւանդանալով կը դառնայ Եգիպտոս ուր կը վախճանի 1826ին:

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ.— Մբ. Նւ. Վանայ 1823ին:

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ.— Մբ. ՏԴ. 1694ին (Օրագրութիւն Ամգեցիին):

ՍՏԵՓԱՆ ՎՐԴ. ՋՈՒՂԱՑԵՑԻ.— Մբ. 1758ին. Լս. Բեթղեհէմի:

ՍՏԵՓԱՆ ՎՐԴ ՎԱՆՑԻ.— Մբ. խոստ. 1753ին. իր մասին կը պատենք Պատմ. երկրին Տարոնոյ գիրքին մէջ գրուած հետեւեալ ինքնագիր յիշատակարանը. «առ ի անջրելի պահել զյիշատակ յայսմ գրոցս. կամիմ զոյգն ինչ զեկուցանել. քանզի ես եկի ի կերտէն Վասպուրականի. և ի աւանէն Էրէրնա, Ստեփաննոս վրդս. եկի ի սուրբ քաղաքն Սաղէմ. և հոլով ժամանակս զետղեալ եղէ միաբան և խոստովանահայր և մտածելով զբանս մարգարէին որ ասէ թէ երանի այնոցիկ որք ունին ըզպաւակ ի Սիոն, վասն որոյ ի արդար ընչից և վաստակոց որ ի ժամարարութենէ գայր. զամբն. մխեցի սակս ածային գըրեանս... յիշատակ ի սուրբ Սաղէմ և ի դուռն Ս. Յակոբայ... յիշեսջիք զՍտեփանոս վրդս. ՌՄԲ» (= 1753): Ս. Յակոբի իր տուած յիշատակի մասին (տե՛ս ՄՋ. Թ. 532):

ՍՏԵՓԱՆ ՎՐԴ. ՎԱՆՑԻ.— Մբ. 1840ին:

ՍՏԵՓԱՆ ՎՐԴ.— Մբ. հաւանաբար Նւ. մը երուսաղէմի որ 1226ին կ'այցելէ Արտամէտ գիւղը (Վան), յիշատակագիր մը հետեւեալը կը գրէ անոր մասին. «... և յաղդմանէն Աստուծոյ ի սուրբ երուսաղէմայ վարդապետ մի Ստեփանոս անուն առաքինի եւ ճգնաղդեաց՝ զգաստ եւ պարկեչտ յամենայն ճանապարհս ածային. յոյժ ծերացեալ ալեօք՝ եկն ի քաղաքն Արտամէտ, և կացեալ անդ զաւուրս ինչ». (Պղնձէ ֆղ. էջ 157). Ստե-